



Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Ամսաթիվ՝	22 նոյեմբեր 2014թ.
Վարկի համար՝	2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3
Պայմանագրի համարը և անունը՝	N 03-IC-002 – Իրավական աջակցություն Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհային հատվածների հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերի (ՀՕՏԾ) պատրաստմանը և Հողի օտարման և տարաբնակեցման իրավական մասնագետ (ՀՕՏԻՄ)
Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝	03 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել 03-IC-002 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար:

Պայմանագրի պայմանները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման ուղեցույցների համաձայն:

Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

Հողի օտարման և տարաբնակեցման իրավական մասնագետ ՝

Գործակալությունը կվարձի ազգային անհատ-խորհրդատուի, ով ունի առնվազն 3 տարվա իրավաբանի աշխատանքային փորձ: ՀՕՏԻՄ հիմնական գործառույթներն են՝

1. Տրանշ 3 շրջանակներում տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ իրավական ցուցանիշների վերաբերյալ և աջակցել տարաբնակեցման միջազգային և տեղական մասնագետներին վերանայելու և անհրաժեշտության դեպքում վերանայել և թարմացնել հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը (ՀՕՏԾ)՝ տեղական օրենսդրությանը համապատասխան,
2. տարաբնակեցման միջազգային և տեղական մասնագետներին տրամադրել իրավական աջակցություն պատրաստելու իրականացմանը պատրաստ երկու ՀՕՏԾ՝ վերանայված ՀՕՏԾ-ի և համաձայն ԱԶԲ-ի Անվտանգության համակարգի (2009), հիմնվելով ազդեցության ենթակա գույքի ամբողջական գնահատման և վերջնական ստորագրված արձանագրությունների վրա, ինչպես նաև ՀՀ օրենսդրության հիման վրա,
3. ազդեցության ենթակա անձանց աջակցել բողոքների լուծմանը՝ ՀՕՏԾ-ով սահմանված համակարգի և մեխանիզմների միջոցով: Համագործակցել ՀՕՏԾ-ի համապատասխանության անկախ ստուգմանը, խորհրդատվություն տրամադրել իրավական հարցերի վերաբերյալ, տրամադրել բացատրություններ և պարզաբանումներ,
4. աջակցել կազմակերպության կողմից սոցիալական ազդեցության ուսումնասիրություններին և աշխատանքներին՝ գնահատելով ծրագրի կրուստները կապված ազդեցության ենթակա անձանց իրավունքների և հատուկ ընթացակարգերի հետ,
5. անհրաժեշտության դեպքում կազմակերպել և/կամ օգնել տարաբնակեցման միջազգային մասնագետին կազմակերպելու խորհրդակցություններ տեղական և պետական մարմինների, ազդեցություն կրող համայնքների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ,
6. խորհրդակցել ԾԻԿ-ի հետ հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերի իրականացման ընթացքում (ներառյալ ազդեցության ենթակա անձանց օրինականացման, տեղեկատվական քարոզարշավներ, շահառուների մասնակցություն, հրապարակման առաջադրանք),
7. ապահովել հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերի իրավական համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և ԱԶԲ քաղաքականությանը,
8. աջակցել ԾԻԿ-ին ազդեցության ենթակա անձանց համաձայնությունը ընթացիկ ուսումնասիրման հետ, անհրաժեշտության դեպքում կատարել դաշտային այցելություններ՝ տեղամասում քննելու առկա բողոքները,

9. ներկայացնել ամսական առաջընթացի հաշվետվություններ և վերջնական հաշվետվություն Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհային հատվածների հետ կապված իրավական ընթացակարգերի պատրաստ լինելու վերաբերյալ:

Ընտրության եղանակը՝	Անհատ խորհրդատուի ընտրություն (ICS)
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ վճարումներով
Գնահատված բյուջեն՝	21,600.00 (քսանմեկ հազար վեց հարյուր) ԱՄՆ դոլար (առանց հարկերի)
Մասնագիտական անձնակազմի ներգրավում՝	18 մարդ-ամիս
Առաջադրանքի իրականացման տևողությունը՝	18 ամիս
Աշխատանքների սպասվելիք սկիզբը՝	16 դեկտեմբերի 2014թ.
Աշխատանքների սպասվելիք ավարտը՝	15 հունիսի 2016թ.
Խորհրդատուների տեսակ՝	ազգային անհատ-խորհրդատուներ

Հայտերի ներկայացում՝

Հետաքրքրվող մասնակիցները կարող են գտնել և բեռնել հետաքրքրության հայտի ձևն ու ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից՝ <http://www.cms.adb.org>: Հետաքրքրության հայտի ձևը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև amirkhanyane@northsouth.am և abrahamyank@northsouth.am էլեկտրոնային հասցեներին ուղարկելով էլեկտրոնային նամակներ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 03 դեկտեմբերի 2014թ.:

Կազմակերպության անվանումը՝	«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
Հասցեն՝	ՀՀ, ք. Երևան 0002, Թումանյան փողոց, թիվ 38 շենք
Հեռախոս՝	+374-60-50-68-70 (71)
Հարցերի համար դիմել՝	Էռնա Ամիրխանյան, Կարինե Աբրահամյան
Էլեկտրոնային հասցե՝	amirkhanyane@northsouth.am , abrahamyank@northsouth.am